ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2008 թվականի մարտի 11-ի
թիվ 68-Ն որոշմամբ հաստատված
"Ազդագիր և հաշվետու թողարկողների հաշվետվություններ"

ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԵՐԱՌՈՂ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

ՖԻՆՔԱ ՈՒՎԿ
Փակ Բաժնետիրական Ընկերություն
ՀՀ, ք. Երևան, Ագաթանգեղոս փ. 2ա, հեռ. (+374 12) 55 55 55
էլ. փոստ info@finca.am
Հաշվետվություն թիվ 12, 13.12.2018թ.

"Մենք՝ ստորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ հաշվետվությունում ներառվող տեղեկությունները ճշգրիտ և ստույգ են և չեն պարունակում բացթողումներ, որոնք կարող են խեղաթյուրել փաստաթղթի ամբողջականությունը":

ստորագրող անձինք՝

Անուշ Պետրոսյան	**Վարչության անդամ, Ֆինանսական տնօրեն**		13.12.18.
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Արտակ Միքայելյան	**Վարչության անդամ, Գլխավոր հաշվապահ**		13.12.2018թ
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Հարություն Զադրյան	**Վարչության անդամ, Իրավաբանական բաժնի ղեկավար**		13.12.2018թ.
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

Ստորագրությունները հավաստում եմ՝

Հրաչյա Թոխմախյան	**Վարչության նախագահ, Գլխավոր տնօրեն**		13.12.2018թ.
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

13 դեկտեմբեր 2018թ.

«ՖԻՆՔԱ» ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՀՀ ԵՐԵՎԱՆ
"FINCA" UNIVERSAL CREDIT ORGANIZATION CJSC RA YEREVAN
«ՖԻՆՔԱ»
"FINCA"
00445174

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ Տնօրենների խորհրդի անդամները 2018թ. դեկտեմբերի 10–ին կայացրեցին թիվ 31/2018 որոշումը (հիմք ընդունելով 29.10.2018թ. թիվ 25/2018 որոշումը).

1. Հաստատել 1,400,000,000 (մեկ միլիարդ չորս հարյուր միլիոն) ՀՀ դրամ ընդհանուր անվանական ծավալով, անվանական չփոխարկվող արժեկտրոնային ոչ փաստաթղթային պարտատոմսերի առաջին փուլի թողարկումը երեք տարի ժամկետով, 10.5% (տասն ամբողջ հինգ տասնորդական տոկոս) տարեկան տոկոսադրույքով:

2. Տեղաբաշխումն իրականացնել «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ տեղաբաշխման համակարգով, որից 1,260,000,000 (մեկ միլիարդ երկու հարյուր վաթսուն միլիոն) ՀՀ դրամ ընդհանուր ծավալով 126,000 (մեկ հարյուր քսանվեց հազար) հատ պարտատոմսերի թողարկումը և տեղաբաշխումն իրականացնել ստանդարտ փակ աճուրդի անցկացման միջոցով՝ ընդ որում բացառելով ոչ մրցակցային, ինչպես նաև լրիվ բավարարմամբ հայտերի ներկայացումը, իսկ մնացած 140,000,000 (մեկ հարյուր քառասուն միլիոն) ՀՀ դրամ ընդհանուր ծավալով, 14,000 (տասնչորս հազար) հատ պարտատոմսերը ձեռք է բերվելու «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ կողմից անվանական արժեքով՝ որպես շուկա ստեղծող՝ երկրորդային շուկայում պարտատոմսերի իրացվելիության և ներդրումային գրավչության բարձրացման նպատակով:

3. Պարտատոմսերի թողարկումը և տեղաբաշխումն իրականացնել 2018 թվականի դեկտեմբերի 18-ին՝ մեկանգամյա աճուրդի անցկացման միջոցով համաձայն սույն որոշմանը կից Հավելված 1–ում ներկայացված թողարկման վերջնական պայմանների: